

III.

Բ Ն Ո Կ Ա Ր Ա Ն .

Չմեռը երբ վրայ է հասնում, բոշաները լցւում են ամենամօտ գիւղերում և կամ իջնում իրենց ընտրած քաղաքը և բնակւում են մի թաղի մէջ վարձուած խրճիթներում ու միմեանց կից: Մի խղճուկ խրճիթ է այդ, առանց լուսամուտի և լուսաւորուած կտուրի վրայ բացուած երթիկով: Տանը այդ միակ սենեակումն է դիզած ու լցրած ամէն բան: Մի կողմը փթիւրը, ցախն ու տոպրակներով սլաշարեղէն, միւս կողմը անկողնի նմանող զլգլեակներ, հնամաշ, ծուէն-ծուէն եղած կարպետներ, այս-այն անկիւնում հաց թխելու պարագաներ, միքանի տման և ապա՝ մաղ գործելու փոքրիկ փայտեայ գործիքը: Ամէն ինչ խառն ի խուռն է խրճիթում, անկարգ ու աղտոտ: Խրճիթի ուղղակի երթիկի տակ շինած է փոքրիկ թոնիրը, ուր հաց են թխում և կերակուր եփում: Ամէն օր այդ թոնիրը վառւում է, ծխով լեցնում խրճիթը և թոնիրի շուրջը այդ յ խի մէջ՝ աչքերը տրորելով պտույտ են գալիս ագահութեամբ ուտող կիսամերկ, աղտոտ, անլուայ, խռիւ մազերով ոտաբոբիկ մանուկները ծուէններ կամ ամէն տեսակ հագուստ անկարգ, տակն ու վրայ հագած, երբեմն բոլորովին մերկ: Նոյն իսկ 11—12 տարեկան աղջիկները, որոնց մի տարուց յետոյ ամուսնացնելու են, անոտանդրել մազերով ու կեղտոտ՝ կամ օգնում են տանտիկնոջ և կամ վագում են դուրս ու ներս: Խրճիթի մէջ հետաքրքիր է օջախը (սանթօ), որ բացուած է պատի մէջ: Այնտեղ միշտ կրակ չէ վառւում, այլ շաբաթը մի անգամ

և այն էլ ոչ իբր պիտույք, այլ իբր յարգանք տան մեռած անդամների:

Ձմեռը թոնիրն է միայն, որ տաքացնում է տունը, այլ և գոմը, որի մէջ միայն էշեր են կապուած: Երբ թոնիրը իջնում է, ամէնքը ոտները կախում են մէջը, ծնկների վրայ մի վերմակ քաշում և այդպէս տաքանում:

Բ. ԶԳԵՍՏ ԵՒ ԶԱՐԴ

Հայ-բոշայի զգեստը մի զարմանալի այլազանութիւն է ներկայացնում. ով ինչ գտաւ՝ հագնում է և հագածն էլ միշտ հին է, կարկտաններով լի, կտրտուած ու մաշուած: Կովկասում հայ բոշա տղամարդը հագնում է ինչ որ իր շըրջանում հայերից ձեռք է բերում. արխալուղ, չուխա, գըլխին փափախ կամ ռուսական իւղոտ գլխարկ, ոտերին եամանի, տրեխ... ինչ ասես հագնում են. կուրծքը սակայն միշտ բաց է. գօտին պարզ կաշուից և ոտներին — սրունգների վրայ յաճախ զանկապաններ: Թիւրքիայում բոշա տղամարդի հագուստը գրեթէ ցնցոտի է. ինչ որ հայ գիւղացին երկար հագնել-մաշելուց չեսոյ նետելու է պատրաստում, բոշա տղամարդը գնում է նրան և դեռ տարիներով հագնում: Այնտեղ ամէն գաւառում հայ-բոշան հագնում է գաւառացոց նման. իսկ թափառականների տարազը գրեթէ բուն ազգային է. լայն բաճկոնակ, լայն ու կարճ շալվար, ձմեռն էլ մի արա: Բոշայի հագուստը ձմեռ թէ ամառ՝ միևնույնն է:

Մի բան որ նկատելի է, դա այն է, որ բոշաներից ծերերն ու մանուկները անհոգ և ցնցոտիներ են հագնում, իսկ պատանիները և նորահարսները մանաւանդ՝ համեմատաբար մաքուր շորեր ունին: Նորաստակ կամ դեռ երիտասարդ բոշա տղամարդի արխալուղն ու բաճկոնակը նոր է, կոշիկը լաւ, գլխարկը աւելի մաքուր և գօտին կամ նոր շալ կամ միքանի արծաթէ զարդերով պատած: Նորահարսը ամենից

մաքուրն է հագնուում և միշտ թունդ կարմիր գոյն. կարմիր գոյնը բոշա կնոջ ամենասիրելի գոյնն է. գրեթէ բոլոր բոշա կանայք կարմիր են հագնուում: Բոշա պառաւը նոյնպէս անխնամ է հագնուած և հնամաշ շորեր ունի, իսկ զարդ գրեթէ բոլորովին չէ գործածոււմ. մինչ բոշա նորահարսը ունի մի զոյգ արծաթեայ ապարանջաններ, իսկ ձեռքերի շատ մատների վրայ արծաթէ կամ բրոնզէ կոշտ-կոպիտ մատանիներ: Ոսկեայ զարդի գործածութիւն լիովին չկայ, նոյն իսկ եթէ բոշան հարուստ լինի: Բոշա երիտասարդը երբեմն կրում է արծաթէ խոշոր ու հին ձևի մատանի: Բացի ապարանջանից և մատանիներից, բոշա կինը ոչ մի զարդ չունի. հագուստը շատ պարզ է և համեստ: Հակառակ իրենց շրջապատող զանազան ազգերի գործածած զարդերի կամ այլ սովորութիւնների, բոշա կինը ոչ աչքին սիրում է դնոււմ, ինչպէս անում են չինգէնէ կանայք, ոչ օղ կամ խրզում քթին՝ ինչպէս քիւրդերը և ոչ էլ ձեռքերին կամ ոտքերին հինա է դնոււմ, ինչպէս լաճախ անում է հայ կինն իսկ. բոշա կինը հինան մինչև իսկ իբր բժշկական միջոյ չէ գործածոււմ և ոչ էլ մազերին դնոււմ, ինչպէս անում են իրեն շրջապատող շատ ազգեր:

Գ. ԿԵՐԱԿՈՒՐ ԵՒ ԽՄԻՉԲ

Բոշան շատակեր է. անընդհատ ուտում է. ուտելու որոշ ժամ չունի. հէնց որ քաղցեց կամ կերակուրը պատրաստ եղաւ, նստում է ուտելու: Նա ամէն բան ուտում է, բայց սիրում է աւելի համեմած, կծու, այրող բաներ. նրա կերակուրի մէջ անպակաս են սխտոր, պղպեղ, քացախ և այլն: Չնայելով այդ բոլորին, միս քիչ են ուտում. գերադասում են իւղեղէն և խմորեղէն: Ամենասիրած կերակուրներն են մալէզը և փլաւը: Մալէզը մի տեսակ ազգային կերակուր է, որ պատրաստում են խմորով և իւղով. շատ նման է վասպուրականցոց խաւիժին. խմորը լցնում են տաք

ջրի մէջ և գդալով այնքան խառնում, մինչև որ հալվալի պէս կոշտանում է և բովւում. լետոյ կտրտում են, իւր ածուծ վրան և ուտում: Սիրում են չիրով փլաւ և ձուածեղ, որոնք խնջոյքների ժամանակ ամենապատուաւոր կերակուրն են համարում:

Տղամարդիկ միշտ, թէ ընտանիքում և թէ խնջոյքներում՝ առանձին են ճաշում, իսկ կանայք և մանուկները առանձին: Պատասխապաղ և այլն երբէք չեն գործածում. ուտում են վերին աստիճանի աղտոտ, ձեռքով և վայրենիների նման:

Խմիչքների մէջ միմիայն օղի են գործածում և այն էլ ահագին քանակութեամբ թէ սովորական և թէ տօնի կամ խնջոյքի օրերը: Այդ խմիչքից դուրս նրանք ոչինչ չեն խրմում. ո՛չ գինի և ո՛չ գարեջուր:

Կերակուր պատրաստելու պարտականութիւնը, եթէ տան մեծ կինը չէ գնացել թափառելու, նրա վրայ է, իսկ եթէ գնացել է, նորահարսինն է կամ տան տղջկանը: Կերակուրի համար նրանք ամէն պատրաստութիւն ունին. պաշարով լիքն է տուներ. ինչ ասես որ չգտնուի, սկսած չորացրած բանջարեղէնից, լոբուց, մինչև իւղը, պանիրը և այլն. ո՛չ մի հայ տուն այնքան լիքը չէ պաշարեղէններով, որքան լիքն է իւրաքանչիւր բոշայի խրճիթը:

Բոշաները ծխում էլ են. տղամարդիկ ծխախոտ. և շատ են ծխում. իսկ կանանց մէջ միայն պառաւները (Կովկասում) և աւելի յաճախ՝ քթախոտ են գործածում. իսկ թրքահայ բոշա կինը երբէք չէ ծխում. դա համարւում է մեծ ամօթ: Այս կէտումն էլ, որպէս շատ միւսներում, բոշա կինը զանազանում է չինգէնէ և եւրոպական գնչուհիներից: Աւերջիններս սաստիկ ծխում են: